Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

№ 3

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱԿԱԼԿՈԼԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## ԵՌԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ.

Հաստատուած 1 Մայիս 1899 Թ. — Թաւրիզում։

1903

ԹԱՒՐԻԶ.

613.8
Պ-35

Թէմական Տպարան Հայոց Առաջնորդարանի — Թաւրիզում.

18 JUL 2013

2816

13.8
)-35

20 JUL 2013

54

[illegible] Հայոց Աշխարհագրական ընկերութեան
Գրադարանին [illegible] Արշակ Ալ-պօյաճեան[illegible]

7/21 [illegible]

370
2370-55

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պարսկաստանի Հակալկոլական Ընկերութեան.

# ՃՇՄԱՐԻՏ ԲԱՐԵԳՈՐԾԸ

«Մարդիկ սարսափում են խոլերայից,
«բայց ալկոլը նրանից պակաս վարա-
«կիչ ախտ չէ։»

ԲԱԼԶԱԿ

Ալկոլի դէմ կռիւ մղելը անժխտելի կերպով մեծ բարեգործութիւն է. ճշմարիտ բարեգործը այն է, որ արմատախիլ է անում թշուառութիւնների սկզբնապատճառը, ալկոլը բոլոր չարիքների սկզբնապատճառ լինելով, ինչպէս միկրոպը զանազան հիւանդութիւնների մէջ, աւելի խելացի և նպատակայարմար գործ է կռուել այդ սկզբնապատճառի դէմ։

Ճիշտ է, որ այս դարի մէջ հիւանդանոց, անկելանոց, որբանոց, թոքախտաւորի բուժարան հաստատելը, բանտային և դատաւորական դրութիւնները բարեկարգելը մի մեծ բարեգործութիւն է նկատւում, սակայն այդ բոլորը չեն պակասեցնում ենթակաների թիւը, որը օրէց օր շատանում և մարդկութեան մի մեծ բեռ է դառնում։ Գործը իր արդիւնքից պէտք է ճանաչել։ Այդ մի կարգ բարեգործութիւն համարուածները, բացի ենթականերին վաղանցուկ մի մխիթարութիւն պատճառելուց, ոչինչ են արել հիմնական, տեական և կանխարգել։ Աղքատին հաց տալ և ձրիակերութեան և մուրացկանութեան վարժեցնելը բարեգործութիւն



չէ, այդ նշանակում է քաջալերել մուրացկանութիւնը և աղքատ—մուրացիկների թիւը աւելացնել։ Ճշմարիտ և գիտակից բարեգործը, աղքատին հացի փոխարէն գործ պէտք է տայ և դասակարգային անհաւասարութիւնները վերացնէ, արմատական միջոցը այս է։

Աղքատութեան նման, մարդկութեան սպառնացող միւս չարիքներն էլ ունին իրենց սկզբնապատճառները, որոնց մէջ առաջնակարգ տեղ է բռնում ալկոլականութիւնը։

Վերև յիշուած բոլոր բարեգործներից աւելի մեծ բարեգործ է այն անհատը, որ ոգելից խմիչքներ գործ չի ածում և ուրիշներին խրատում և համոզում է գործ չի ածել։ Որովհետև, մարդիկ ալկոլից հեռու մնալով, մեծ թւով պակասեցնում են հիւանդների, յիմարների, թշուառների, աղքատների, թոքախտաւորների, այլասերուածների և ոճրագործների թիւը։

Ջէնըր, Պաստէօր, Ռու մարդկութեան մեծ բարերարներ են կոչւում, որովհետև հազարաւոր մարդկային կեանքեր փրկեցին իրենց գիւտերով ընդդէմ ծաղկի, կատաղութեան և դիֆտէրիտի. մինչ ալկոլը նւազ վնասներ և մահեր է պատճառում մարդկութեան, քան այդ հիւանդութիւնները։ Մեզանից ով չի ցանկար լինել մի Ջէնըր, մի Պաստէօր կամ մի Ռու, փրկելով հազարաւոր կեանքեր, առանց մի մեծ զոհողութեան, առանց երկար ճիգերի, առանց տաժանելի և միանգամայն վտանգաւոր աշխատութեան։

Եղէք հակալկոլականներ, կռուեցէք ալկոլի դէմ, և ահա, ձեր այդ գործով փրկած կլինէք հազարաւոր կեանքեր և կդառնաք մարդկութեան մեծ բարերարներ։ Գուցէ գտնուին սկեպտիկաբար ասողներ.— «Մի՞թէ հակալկոլական դառնալով կարելի է հազարաւոր կեանքեր փրկել»։ — Այո,

պատասխանում ենք․ եթէ մեզանից իւրաքանչիւրը հակալկոլական դառնայ, ընդհանուր մահաթւից 27 %, թոքախտաւորներից 50 %, խելագարներից 20 %, ոճրագործներից 80 %, թշւառներից 45 % պակասելու է։ Միթէ մի մեծ բարիք չէ այս։ Դեռ չենք յիշում այլասերւածների, լուսնոտների, սեռնդագործութիւնից գրկւածների, վիժումների, կանխահաս մահերի, ապուշների համեմատութիւնը։

Ալկոլականութիւնը համաշխարհային մի մեծ ցաւ է․ զանազան երկիրներում վաղուց սկսել են այդ մեծ չարիքի դէմ կռիւ մղել, կազմելով հակալկոլական ընկերութիւններ, կռւող բանակներ։

Հայերի մէջ ևս անհրաժեշտ էր գործել մի այսպիսի ընկերութիւն կազմելը․ նոյն անհրաժեշտութիւնը շեշտում են տեղեկագրիս ճակատը զարդարող երկու բարձրաստիճան, պատկառելի, պաշտելի և հեղինակաւոր անձնաւորութեանց գրութիւնները՝ Վեհափառ Հայրիկի օրհնութեան կոնդակը և Կ. Պոլսոյ նախկին Պատրիարք Իզմիրլեան սրբազանի նամակը։

Այս նպատակով արդէն երեք տարի է Թաւրիզում կազմւած է «Հակալկոլական Ընկերութիւն» կռւող ոյժը, որի բարերար արդիւնքը փայլում է հասարակութիւնը։

Հայերը ամեն տեղ պարտաւոր են կազմել նոյն օրինակ և նոյն ծրագրով ընկերութիւններ, որոնք կարող են «Պարսկաստանի Հակալկոլական Ընկերութեան» հետ կապ ունենալ իբրև մասնաճիւղ և կամ բոլորովին անկախ գործել։

Ալկոլի դէմ մղւած կռւում մեծ դեր կարող են կատարել ուսուցիչներն և ուսուցչուհիները․ ամենալաւ և ամենայարմար միջոցը երեխաներին հակալկոլականներ դարձնելն է, որոնք կը կազմեն ապագայ մարդկութիւնը։

Ուրեմն, ուսուցիչ և ուսուցչուհիները նախ իրենց ան-



ձով օրինակ պէտք է դառնան իրենց աշակերտներին և երկրորդ՝ նրանց մէջ պէտք է կազմեն «Հակալկոլական Ընկերութիւններ», ալկոլի վնասները նրանց բացատրելով։

Ըստ հետևեալ առածին, երբոր հակալկոլական պրոպագանդան երեխաներից է սկսւում, գործը աւելի է հեշտանում․ մեծերի մէջ երբոր այս մոլութիւնը արմատ է բռնում, նրան ոչնչացնելը դժւար է լինում։

«Այն մոլութիւնը որ ծըծեց,
«Երեխան հետ մօր կաթին,
«Չելներ, ո՛չ, զուր կըծեծես,
«Մինչև որ չելնէ հոգին։

Հրաւէր ենք կարդում Պարսկաստանի այլ և այլ տեղերում ապրող ինտելիգենտ դասակարգին լինել հակալկոլական և իր միջավայրում կազմակերպել ընկերութեան մասնաճիւղեր։

Ընկերութիւնս իր նիւթական միջոցների ներած չափով հետզհետէ առանձին բրօշիւրներով հրատարակելու է իր գաղափարութիւնները և ձրիաբար տարածելու է հասարակութեան մէջ։

Այս փրկարար պրօպագանդան աւելի լայն ծաւալով տարածելու համար, ընկերութիւնը կարօտ է նիւթական օժանդակութիւնների։ Ուստի, խնդրում է այս գործին համակրողներից և մասնաճիւղերից, չխնայել իրենց նւէրները․ մանաւանդ իրենց բարեկամների և ծանօթների շրջանում յանուն ընկերութեան հանգանակութիւններ կազմելով արդիւնքը ուղարկել վարչութեան։

Ցաւում ենք, որ Պարսկաստանում արդէն գոյութիւն ունեցող մասնաճիւղերը շատ թոյլ են գտնւում և ուժեղ կերպով չեն կազմակերպւում․ մասնաճիւղերը պարտաւոր են

կազմել պարբերական դասախօսութիւններ, հասարակութեան պարզելու համար ալկոլի բազմակողմանի վնասները, գտնել նրանցից նոր անդամներ։

Վարչութիւնս իր խորին շնորհակալութիւնն է յայտնում այն բոլոր անձնաւորութեանց, որոնք նպաստած են մեր մարդասիրական գործին նիւթապէս և բարոյապէս. մանաւանդ շնորհակալութիւն Վեհափառ Հայրիկին, որ բարեհաճեցաւ իր սրբատառ կոնդակով օրհնել և քաջալերել ընկերութիւնս, Ամենապատիւ Իզմիրլեան Սրբազանին, իր գնահատիչ և քաջալերական գրութեան համար. պարսից Բարձր Թագաժառանգ Իշխանին, որ բարեհաճեցաւ իր իշխանավայել նուէրով մեծապէս օժանդակել մեր գործին. յարգելի բժշկապետ պ. Վահան Արծրունիին, որ մեր պրոպականդային ույժ տալու համար հաճեցաւ ձրիաբար գրել „Մի խմիր" բրոշիւրը, դրամական մի նուէր ևս աւելցնելով։

Ջերմ շնորհակալութիւն նաև ազնիւ նուիրատուներին, նուէր հանգանակողներին, դասախօսութիւններ կարդացողներին և ազգային այն թերթերին, որոնք մեր մարդասիրական պրոպականդային ույժ տուին, հրատարակելով նուիրատուութիւնների ցուցակները, արտատպումներ անելով ընկերութեանս հրատարակութիւններից և ընկերութեանս մասին տեղեկութիւններ հաղորդելով։

Պարսկաստանի Հակալկոլական Ընկերութեան
Կենդրոնական Վարչութեան
Նախագահ՝ Դոկտ. Կ. Յ. Փաշայեան
Քարտուղար՝ Երուանդ Ֆրանգեան
Գանձապահ՝ Ա. Գ. Ոսկեան
Անդամներ ( Ռաֆայէլ Մախէսեան
( Սիրաք Գրիգորեան

22 Նոյեմբեր 1902
Թաւրիզ



# ԿՈՆԴԱԿ

## ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ Ծ. ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

ՄԿՐՏԻՉ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ
ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄ. ՀԱՅՈՑ
ՌՅԽԲ - 1893

Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի.

Յարգելի Դոքթօր Կարապետ Յակոբեան Փաշայեանց նախագահին հակալքոլական ընկերութեան և մեծարոյ անդամոց նոյն ընկերութեան հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ նուիրեմք ողջոյն և Հայրապետական օրհնութիւն։

Մխիթարութեամբ սրտի ընթերցաք գրութիւն պ. բժշկապետիդ ուղղեալ 'ի 27 Յունիսի ամսոյս, որով յայտնէք եթէ նախաձեռնեանդ հանդիսացեալ կայք հակալքոլական

ընկերութեան տեղւոյդ և ընտրեալ նոր նախագահ վարչութեան և ցանկալք զի Հայոց Հայրիկն եւս օրհնեսցէ և հաստատեսցէ զնորակազմ ընկերութիւն Ձեր։ Որդեակք հոգեորք, ի վաղ ժամանակէ հետէ յայտնի է համայնից ազգաց և ազանց թէ քանիօն վնասակար և աղետաբեր է վասն մարդկութեան չար ախտն արբեցութեան, որ իբրև ցաւ վարակիչ հնձէ և կործանէ զբազմաթիւ երկրպագուս իւր և ոչ միայն միոյ սերնդոյ լինի ապականարար, այլ և մի քանի անմեղ սերունդք տուժեն չարաչար, որն աղքատութեամբ, որն խեղճութեամբ, որն ծուլութեամբ, որն իբրև խելագար ժառանգորդ մահացեալ հօրն թող թէ կործանումն բազմաթիւ ընտանեաց և բարոյապէս և ֆիզիքապէս և նիւթապէս։ Գիտէք և տեսանէք յամենայն աւուր և ժամ զզզուելի տեսիլ արբեցողաց, որոց կորուսանելով զոր ինչ Աստուածային է, հոգեկան է, մտաւորն և գիտակցական, իբրև գազանք և անասունք անկանին ի փողոցս և ի հրապարակս, ոմանք իբրև գազանք պատառողք և ոմանք իբրև անասունք ի տիղմս թաւալելով, աւա՜ղ և հազար աւա՜ղ անմեղ և թշուառ ընտանեացն այնպիսեաց և զաւակաց որոց դժպհի եղել է բաղդն և զայն միճակ սահմանեալ վասն նոցա. արդար վաստակն, աւելն քրտինքն և տօրեայ հացագինն գնայ և մտանէ ի գինետուն և տուն և ընտանիքն մուրացիկք առ դրունս այլոցն դեգերական, Գո՜հ եմք զՁէնջ, ո պատուական քաջակամեա, որ յաջողեալ էք ի ջանս Ձեր և ի վաստակս և ի գլուխ կանգնեալ այդպիսի փրկարար գործոյ. օրհնեալ էք Դուք յԱստուծոյ և օրհնեալ հետևորդքն Ձեր և անդամք հակալկոլական ընկերութեան տեղւոյդ։ Յորդորն իմ և օրհնութիւն ընդ իս կանգակիս հասցէ առ Ձեզ և որոց բարեկամք Ձեր են և մերձաւորք ի խրատ և ի զգուշութիւն հե-



ռի կալ խոտաւ յոգելից ըմպելեաց գնոյն և ընկերիս սասուցանելով։ Յաջողեսցէ Տէր ընդ երկայն ամս պահել զախտն Ձեր իբրև արանց քրիստոնէից ըստ բանի Աւետարանին այոն՝ այո և ոչն՝ ոչ, ուխտել և հաստատուն կալ։ Ընկալարուք, որդեակք մեր զօրհնութիւն Հայրապետին Հայոց, որ եմք հանապազ վասն բարօրութեան, երջանկութեան և յառաջադիմութեան սիրելի ազգիս աղօթարար՝

Մ, Կ, Ա. Հայոց

Թ. 1397
ի 30 Նոյեմբերի 1901 ամի
Ըստ տոմարի ՌՅԾԱ
ի Հայրապետութեան մերում Թ. ամի
ի Ք. Տփխիս

# ՕՐՀՆԱԳԻՐ

Կ. Պոլսոյ նախկին Պատրիարք Ամենապատիւ Տ. Մատթէոս Արքեպիսկոպոս Իզմիրլեանի

Ս. Երուսաղէմ 18 Յուլիս 1902

Գերազնիւ Տեարք՝ Հակալկոլական ընկերութեան Պարսկաստանի

Թավրէժ

Գերազնիւ Տեա՛րք.

Տարակոյս չկայ թէ տգիտութիւնն իր այլեւայլ բազմաթիւ առաւելութիւններով մարդկային ազգին զարգացման ու յառաջադիմութեան ոչ նուազ զօրաւոր թշնամի մըն է, բայց անյաղթելի չէ հանդէպ անխղճօրէն նուիրուած անհատական, հաւաքական ու պաշտօնական անվհատ, յարատեւ ու կորովալից աշխատութեան. անյաղթելի չէ մանաւանդ երբ տգիտութեան դէմ պայքարը ճշմարիտ կրթութեան ու դաստիարակութեան և շօշափելի փաստերով ապացուցեալ գիտութեան իրական ծաւալմամբ՝ մղուի, երբ հրապարակագրութիւնն անաչառապէս մտրակէ ու ծաղրէ տգիտութիւնն, և հաստատուն կամքով պաշտպանէ ճշմարիտը սուտին, ուղղամտութիւնը խաբէութեան և խղճամիտ գործնէութիւնն ու աշխատութիւնն աճապարութեան դէմ. և ամէն նկատումներէ վեր նպատակ ունենայ միայն ազատել մարդը տգիտութեան խոր խաւարէն, և բարձրացնել ու



դնել զայն իր իսկական կոչման և նպատակին մէջ։

Գերազնիւ Տեա՛րք, տգիտութեան անհրաժեշտ հետեւանք անհաշիւ մոլութիւններէն մէկն է և ալկոլամոլութիւնն է — արբեցութիւնը։ — Գիտական փաստերով հաստատուած է այսօր, որ արբեցութիւնն իր աւերիչ դերովն մարդուն ֆիզիքական այնքան սքանչելօրէնս շէնքն ընդհանրապէս և անոր ամբողջութիւնը կազմող ամէն մէկ մասն մասնաւորապէս անանկ կը հիւծէ ու կ՚ախտաւորէ, որ անոնց հիանալի համեմատութեամբ կապակցութիւնն և ներդաշնակ գործնէութիւնը հիմնապէս կը խանգարէ։ Արբեցութիւն ...երքին բոլոր գործարանները կը ծակծկէ ու կը քայքայէ, և մասնաւորապէս կը ծծէ երակներու մէջ բղխող արեան գնդիկներու վարդագոյն կարմրութեան հետ անոնց կենսական ...յժն, և կը թողու զանոնք անգոյն, հիւծած, ուժասպառ ... դէպի փճացում փութացող վիճակի մէջ։ Արբեցութիւն ...արդուն մարմինին ամէնօրեայ վերանորոգելի մասերուն ...ջման կը նպաստէ։ Այս կերպով մարդուն ամբողջ ֆիզի...կանը փտացման կ՚ենթարկի հետզհետէ. և ջղային դրու...թիւնն իր ամբողջութեամբ ծուլիկ, ծուլիկ կը լլայ, հետեւա...պէս արբեցողը կը կորսնցնէ իր ֆիզիքական կազմութեան ...մրութիւնը, ճկունութիւնն և առոյգութիւնն այնպէս որ ...ենաթեթեւ հովի մը հանդէպ չի կարենալով դիմանալ կործանէ տարաժամ ու չարաչար հարիւր տարի դիմանալու սահմանուած կեանքը։

Եւ արբեցողին հոգին՝ այսպէս փտած ախտավարակ ...մինին մէջ՝ զրկուած այնքան հիանալիօրէն յօրինուած ...մինին գործակցութիւնէն, կը դադրի այլեւս ցոլացնելէ ...իմացականութեան լոյսը, կը դադրի իր կարողութիւններն ...անելէ, կը դադրի և օգտակար հանդիսանալէ ինքն իրեն

և իր նմաններուն։ Արբեցութիւնն ոչ միայն կըվարակէ նոյն
ինքն արբեցողը լուսնոտութեամբ, յիմարութեամբ, սևամաղ-
ձութեան և կառաջնորդէ ոճրագործութեան, այլև անսլաց-
ման իր սերունդին կըփոխանցէ արբեցութեան բոլոր ֆիզի-
գական և բարոյական անբուժելի ախտերն, և կըթունաւո-
րէ, կայլասերէ իր սերունդն, ուր այլևս ո՛չ առողջութիւն
ո՛չ զուարթութիւն, ո՛չ բարոյականի մաքրութիւն, ո՛չ վար-
քի ու բարքի ազնուութիւն և ո՛չ անհատական, ընկերական
և ընտանեկան կեանքի վայելք, քաղցրութիւն ու սրբու-
թիւն չի մնար երբէք։

Գերազնիւ Տիա՛րք, Դուք մարդասիրական բարձր նպա-
տակաւ և անձնուէր ու եռանդուն ջանքով ալկոլամոլութիւնն
արմատէն ջնջելու կ'աշխատիք. Դուք Ձեր այս գերաշանցո-
րէն ազնիւ նպատակին հասնելու համար ալկոլամոլութեան
կենսաւէր վնասներն ու աղետալի հետևանքները մաթեմա-
թիքական ճշտութեամբ հաստատուած փաստերով կըպարզէք
և այնպիսի զբօսեցուցիչ և մտաւորական ամէն աստիճանի
տանելի ու մարսելի դասախօսութիւններով, որ պատուար
ժողն ընկերութեանդ կարճ ժամանակամիջոցի մէջ շատն
անյուսալին ընելու և իր ջանքերն արդիւնաւորելու յաջո-
ղած է այսօր. և կասկած չկայ, որ նոյն աշխատութեան և
միջոցներու յամառ շարունակութեամբ պիտի յաղթէ արբեցու-
թեան մոլեգին ոյժին և հասնի իր վսեմ և փրկարար նպա-
տակին և իր մարդասիրական բուռն փափագին իրականաց-
ման, որ պէտք է ըլլայ և ամէն մարդու սրտագին իղձն
ու բաղձանքը։

Պատուարժան ընկերութեանդ այս մեծարժէք ծառայու-
թիւնը Պարսկաստանի սահմաններուն մէջ և այլուր ալ՝ոչ
մնայ յաւէտ իբրև արժան յիշատակի, և ապագայ ժամանակ



թեանց հետ։ Ֆրանսական Հակալկոլական
Միութեան (Union Française Antialcoolique) կողմից
ձրիաբար ցրուած է զանազան բրօշիւրներ և կանոնաւո-
րապէս մինչև ցարդ էլ ստանում է այդ ընկերութեան ֆրան-
սերէն երկու օրկանները՝ L'Alcool և L'Action Universi-
taire ամսագրերը։

Ընկերութիւս մասնակցել է 1901 թւին Վիէննայում
գումարուած VIII-որդ „Հակալկոլական Միջազգային Կոնգրէ-
սին" իր տեղեկագիրը ներկայացնելով, և այս տարի 1903
Թ. Բրէմէնում գումարուած IX-րդ „Հակալկոլական Միջազ-
գային Կոնգրէսին"։

Ընկերութիւնս իր բարենպատակ պրօպականդային աւելի
ծաւալ տալու համար, մինչև ցարդ հրատարակել և
ձրիաբար տարածել է երկու բրօշիւրներ. №1 Մարդկու-
թեան ամենամեծ թշնամին, գրեց Դոկտ. Կ. Յ. Փաշայեան
№2 Մի խմիր, գրեց Դոկտ. Վ. Արծրունի, որոնք մեծ
ընդունելութիւն գտան թէ հասարակութեան և թէ մամու-
լի կողմից, մանաւանդ Գեղունիի յարգելի խմբագրութիւնը
նոյն արտատպումներ արեց, մեր պրօպականդային ոյժ տա-
լու գովելի նպատակով։

Դասախօսութիւնների և երեկոյթների միջոցով հակալ-
կոլական պրօպականդան ոյժեղ կերպով առաջ է տարուած
մանաւանդ Թաւրիզում, ուր շնորհիւ առհասարակ հայ ազ-
գաբնակչութեան մէջ ոգելից խմիչքներ գործածելու վատ
սովորութիւնը պակասեց և չափազանցողներին չափաւորներ
դարձրեց։

Հետաքրքրութեան համար այստեղ դասախօսութիւննե-
րից մի քանիսը կըյիշենք։

1—Ալկոլականութեան վտանգը. Դոկտ. Կ. Յ. Փաշայեան։

2—Անասունների արբեցողութիւնը, Ն. Տ. Յովհաննիսեան

3—Ալկոլի ներգործութիւնը, Դոկտ. Կ. Յ. Փաշայեան։

4—Հակալկոլական շարժումը Ռուսաստանում, Ե. Ֆրանգեան

5—Հակալկոլական շարժումը ամբողջ աշխարհում, Դոկտ. Կ. Յ. Փաշայեան։

6—Ատրպատականում գործածուած ոգելից խմիչքների վի ճակագրութիւնը, Ռափայել Մովսէսեան

7—Ալկոլականութեան ֆիզիքական և բարոյական վնաս ները, Սիրաք Գրիգորեան

8—Մարդկութեան ամենամեծ թշնամին, Դ.Կ.Յ.Փաշայեան

9—Արբեցողութեան բազմակողմանի վնասները, Գեր. Տ. Սահակ Արքեպիսկ. Այվատեան։

10—Կատարեալ ժուժկալութիւն թէ չափաւորութիւն [ խոստմնագիր տալու կարևորութիւնը, Ս. Գ. Ռեխլըն։

11—Ալկոլի վնասները ընդհանրապէս (աշակերտների հա մար մասնաւոր դասախօսութիւն), Դոկտ. Կ. Փաշայեան

12—Գինին ըստ սուրբ գրոց, Դոկտ. Ռայթ։

13—Թոքախտ և ալկոլականութիւն. Դոկտ. Կ. Փաշայեան

14—Սոցիալիզմ և Ալկոլականութիւն. Դոկտ. Կ. Փաշայեան

Այս դասախօսութիւններից №№ 1 և 13-ը հրատարակ ուած է Մ ո ւ ր ճ-ի մէջ, 6-ը Մ շ ա կ-ի և 14 Շ ա ր ժ ո ւ մ-ի մէջ, իսկ 8ը առանձին բրօշիւր է կազմած

Ընկերութիւնս իբրեն որոշ նշան է ընդունած Ֆրան սական Հակալկոլական Միութեան յատկանիշը եղող ,,Կա պոյտ աստղը‘‘*, ստանալ ցանկացողները դիմելու են Թա րիզ Ընկերութեան Նախագահին, կանխաւ վճարելով արժ

* Այս նշանները ընկերութեանս անդամներին վաճառւում 2 ղռանով (1 ֆրանկ կամ 20 կոպէկ). երկու տեսակ են, մինը վերա կուի օձիքի ծայրը անցնելու կոճակ, իսկ միւսը փողկապի գնդասեղ



ը և պոստի ծախքը։

Ինչպէս կանոնադրութիւնից երևում է, ընկերութիւնս այի կամաւոր նուէրներից և երեկոյթներից, բացառիկ հա ոյթնենից, եկամուտի ուրիշ ոչ մի աղբիւր ունի։

Երեք տարուայ ըրթացքում մուտք է եղել 1436 ղռան 5 կոպէկ. ծախք է ունեցել 1309 ղռան 15 կոպէկ. սնդու ում պատրաստ դրամ կայ 127 ղռան 20 կոպէկ։ Ընկերու իւնս վաճառելու համար ունի 80 ղռան արժէքով նշան եր և 104 ղռան արժէքով մոգական լապտերի պատկերներ, րոնք իբրև մուտք չեն նշանակուած հաշուեկշռի մէջ, ուրեմն նկերութիւնը ներկայումս ունի 311 ղռան 20 կոպ. դրամագ ուխ։

— 17 —

# ՀԱՇԻՒ ԿՇԻՌ

1899 Թ. Դեկտեմբերից 1902 Թ. Դեկտեմբեր.

## ՄՈՒՏՔ

| | Ռուբ. | Կոպ. |
|---|---|---|
| Պարսից Ռ. Թադամառանդ Իշխանից նուէր | 250 | |
| Թաւրիզի պարսիկ մեծաւորներից " | 72 | |
| Ամերիկայից՝ պ. Ց. Ալէօնից " | 120 | |
| Թաւրիզաբնակ Ամերիկացիներից " | 206 | |
| Թիֆլիզից՝ պ. Դոկտ. Մ. Արծրունուց " | 31 | |
| Ղազվինի հայերից պ. Կ. Նաբայեանի միջոցով. | 141 | |
| Իգդիրի հայերից՝ պ. Եր. Ֆրանգեանի միջոցով. | 44 | 25 |
| Թաւրիզի հայերից. | 409 | 10 |
| Մոգական լապտերի երեկոյթից գոյացած. | 163 | |
| | 1436 | 35 |

## ԵԼՔ

| | Ռուբ. | Կոպ. |
|---|---|---|
| …ասախօսութիւններ կազմելու | 65 | 15 |
| …ոստի և հեռագրի | 92 | 95 |
| …րօշիւրի, նամակագլխի և այլք տպագրելու | 684 | |
| 21 բրօշիւրին՝ Իգդիրից Թաւրիզ ճանապարհա. | 53 | 10 |
| …րեկոյթի պատրաստութեան | 152 | |
| …ուղթ և ծրար | 30 | 10 |
| …ոգական լապտերի պատկերներ | 104 | |
| …ակալկոլական նշաններ | 61 | 80 |
| …իլինայի կոնգրէսին և գրքեր | 37 | 95 |
| …անազանք | 28 | 10 |
| …նդուկում պատրաստի դրամ | 127 | 20 |
| | 1436 | 35 |

ՀԱՅԿ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱԿԱԱԼԿՈՀՈԼԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1 — Ընկերութեան նպատակն է ալկոլականութեան չարիք-
ները և նրա տարածումն արգիլելու համար պրօպական
դա անել թէ հրապարակական դասախօսութիւններով, թ
յօդուածներով և թէ բրօշիւրներով:

2 — Համոզել և խնդրել կրթական գործիչներին, որ դպրո
ներում ալկոլի վնասները աշակերտներին բացատրեն
նրանց մէջ կազմակերպեն ընկերութիւններ կամ մասն
ճիւղեր:

3 — Հակալկոլական գրքեր և բրօշիւրներ հրատարակելու
հասարակութեան մէջ ձրիաբար տարածելու համար հ
սոյթի միջոցներ հայթայթել առանց անդամավճար նշ
նակելու, միայն կամաւոր նուէրներ ընդունել:

4 — Համոզել հասարակութեանը- որ հարսանիքներում, տ
օրերին, երեկոյթներին, թատրոններում և ուրիշ հաս
րակական վայրերում ալկոլ պարունակող որևէ ըմպ
չըվաճառեն և չըմատակարարեն:

5 — Անդամները չըպէտք է որևէ ոգելից խմիչք գործած
իրենց կեանքի ընթացքում:

6 — Պէտք է իրենց հիւրերին, ծանօթներին, բարեկամներ
թէ իրենց տներում և թէ ուրիշ տեղերում ոգելից խմի
ներ չըմատակարարեն:

7 — Պէտք է աշխատեն որքան կարելի է, համոզել իրե
ծնողներին, ծանօթներին, և այլն, որ տներում չըպա
րաստեն և չըմոցնեն ոգելից խմիչքներ:



— Համոզել ուրիշներին, որ անդամակցեն ընկերութեան:

— Ընկերութեան մ ա ս ն ա ճ ի ւ ղ ե ր ը վարում են իրենց գործերը կենտրոնից բոլորովին անկախ, համաձայն մեր հիմնական կանոնադրութեան, սակայն բարոյական պարտականութիւն ունին օգնելու նիւթապէս վարչութեան:

0 — Մասնաճիւղերը կազմւում են առանց սեռի, ազգութեան և կրօնի խտրութեան:

1 — Պարտաւոր են առնուազն վեց ամիսը մի անգամ իրենց գործնէութեան մասին տեղեկութիւններ հաղորդել Թաւրիզ կենդրոնական վարչութեան:

---

անօթութիւն. Ընկերութեանս բրօշիւրները կարդալով և դասախօսութիւններին ներկայ գտնուելով համոզում գոյացնելուց յետոյ միայն անդամ գրուել ընկերութեանս, միևնոյն ժամանակ անփոփոխ ընդունելով ընկերութեանս կանոնադրութեան հիմնական սկզբունքները:

Ուրիշները ազատ են տարբեր սկզբունքների վրայ կազմակերպել Հ ա կ ա լ-կ ո լ ա կ ա ն Ը ն կ ե ր ո ւ թ ի ւ ն ն ե ր, որոնք ոչ մի կապ չեն ունենալու ընկերութեանս հետ, բացի բարոյական կապերով միացած, ալկոլականութեան մեծ չարիքի դէմ կռիւ մղելուց:

Վարչութիւն

ՀՀ Ազգային գրադարան
NL0271159

2816

ՁՐԻ